


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԱՐ

Նամակ կամ ուր եւ գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼԻՍԳՐՈՒ
Պազար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ի Ս Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱԲԱԿԱՆ

ԿՐ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եզրի վրայի համար տեղին. ողջ դն. 80
» » վեցամսեայ » 50
Օտ աւ երկիրներ տարեկան ծախս 25
» » վեցամսեայ » 14
Թղթաւորի ծախսը խմբագրու-
թեան վրայ է :

Խմբագրութեան ուղղութեամբ հա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր :

ԾԱՅՐԱՅԵՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեր հանրային կեանքի եւ գործունէու-
թեան քննադատելի կողմերէն մէկն ալ սա է
որ կամ մէկ կամ միւս ծայր գիծերու հա-
կում մը ունինք սովորաբար . երբեմն ազա-
տախոհութիւնը կը տանինք մինչեւ անօգուտ
ու ֆլաւաստիք ըլլալու աստիճանին, եւ երբեմն
արժանապատուութիւնն իսկ ոտնակոխ ընել տա-
լու չափ չընկալեալ կը դառնանք . անտեղի
խոհականութիւններ ունինք եւ անհարկի յան-
գըղնութիւններ . միջին ճամբան, ուղիղը, ազ-
նիւր գտնել քիչերուն տրուած է :

Այս օրերս գիտաւթով ձեռքերն իսկ ան-
յաւ Կիպրոսի ազգային կրթարար-ուղարանը
յայտարարութիւնը եւ կանոնադրը : Այդ հաս-
տատութեան մասին ո՛չ քննադատութիւն մը
ունինք ընելիք ո՛չ ալ գովաստ չուայելիք . կը
հաւատանք թէ որքան խնամուելու եւ դաս-
տիարակուելու համար հիմնուած է ու պիտի
կրնայ օգտակար ըլլալ իր համեստ սահմանին
մէջ : Մանչեղքէն երեք պատուաւոր ազգա-
յիններ, տեղեյն Հայոց հոգեւոր հովիւն Նա-
խագահութեամբ, իրենց խնամակալութեան
ներքեւ առած են զայն, ինչ որ կանոնաւոր
ու յարատեւ ընթացքի երաշխիք մըն է : Այս
ամենը լաւ, եւ ի սրտէս յաջողութիւն մաղ-
թողներէն ենք, ինչպէս որ փարոսի առաջին
թիւերով քանի մը հրատարակութիւն ըրինք
անոր մասին :

Մեր ըմբռնել չի կրցածը ու մեր գիտա-
ղութեան առարկան՝ ուսմանց յայտագրի մէկ
— երկու կէտերն են : Աւանդութիւն լեզու-
ներն են՝ հայերէն, յետոյ . . . թուրքերէն եւ
յետոյ անգլիերէն : Մի՛ մոռնաք որ աշակերտ-
ները մեծագոյն մասով պիտի բաղկանան Հա-
յաստանէն փախտակաւ որբերէ որոնց հայրն
ու մայրը զոհ գացած են թուրքին մուկեղնու-
թեան, եւ ասոնք Կիպրոսի մէջ, մայրենի լեզ-
ուի հետ մէկտեղ, իրենց պատանեկան միտ-
քը պիտի յոգնեցունեն թուրքերէն սորվելու :
Առարկուի թերեւս թէ նախատահմանաւ են
իրենց բնագաւառը վերագաւառելու, — պատա-
հականութիւն մը որ շատ մօտ է խելքի ու
սրտի : Բայց ենթադրելով իսկ որ այնպէս ըլ-
լայ, ինչո՞ւ ուրեմն իրբեւ եւրոպական լեզու-
անգլիերէնը դրուած է փոխանակ ֆրանսե-
րէնի . Տաճկաստանի մէջ ֆրանսերէնը միշտ
անհրաժեշտ է ամեն տեսակ գործի ու աս-

պարէզի համար : Իսկ եթէ անգլիերէնին նա-
խագաւառութիւն կը տրուի, որովհետեւ Կիպ-
րոսը անգլիական վարչութեան տակ կը գըտ-
նուի եւ կուզեն անգլիական կրթութիւն մը
տալ ողջը, ան ասան ի՞նչ հարկ թուրքե-
րէնի :

Աւելին կայ սակայն . պատմութեան քով
նշանակուած է «Հայոց եւ . . . Օսմանցոյ» մի-
անգամայն : Ի՞նչ ազգային ներշնչում որբերուն
համար : Յայտագրին հեղինակները ո՛չ իսկ
բարեհաճութիւն ունեցեր են առանձին տող
մը նուիրելու Ազգային Պատմութեան, իբր թէ
երգնիայի կամ Խարբերդի թաղային դպրոցի
մը ուսմանց ծրագիրն եղած ըլլար, ուր չի
պիտի մեղադրուէին : Ենթադրելով որ Կիպ-
րոսի կրթարար—ուղարանին հիմնադիրներն ու
խնամակալները կուզեն անպատճառ օսմանցոյ
պատմութիւնը սորվեցունել հայ որբերուն,
կրնային ընդհ. ազգաց պատմութեան գլուխ
մը բանալ ու անոր մէջ գետնել, — բան մը
որ բոլորովին արտաքսուած է առաջին չորս
տարիներու ջրլանէն : Կիպրոսի մէջ դաստիա-
րակուող հայ պատանին ինչո՞ւ չի սորվի նաեւ
Իտալիոյ կամ Ֆրանսիոյ կամ Յունաստանի
պատմութիւնը, մինչդեռ Թուրքիոյ պատմու-
թիւնը պարտաւորիչ կընեն իրեն համար՝ իր
ազգին պատմութեան հետ համահաստատ
կերպով : Այս եղբայրակցութիւնը, Կիպրոսի
պէս տեղ մը հիմնուած հայ որբանոցի մը ուս-
մանց ծրագրին մէջ, չիղերու դպչող ու խորտ-
չեցուցիչ բան մը ունի իր մէջ :

Անցողաբար պըսիկ գիտաւթութիւն մըն
ալ, թէեւ զուտ բառական . այն երկիրներու
մէջ ուր թուրք դրաքնութեան ձեռք չի ծան-
րանալ հայերէն գրուածքի մը վրայ, կըսենք
«Հայաստանեայց եկեղեցի», իսկ Տաճկաստա-
նի մէջ, գտնէ «Հայ. եկեղեցի» կըճատման
ձեւով : Կիպրոս բացուած որբանոցի մը յայ-
տագիրը որ վիէննա տպուած է եւ զոր հովա-
նաւորողներն են՝ Մանչեղքերցի հայեր, կը
չատանայ ըսելով՝ ԿՐՈՆԻ (Ս. Գրոց պատմու-
թիւն եւ Հայ եկեղեցւոյ վարդապետութիւն) :
Մէարիֆի պաշտօնէի մը ձեռքէն անցած
յայտագիր մը տարբեր կերպով չի պիտի կըր-
նար խմբագրուիլ :

Ասիկայ նոյնքան դատաւարտելի ծայրա-
յեղութիւն մը կը նկատենք որքան պիտի նկա-
տէինք, օրինակի համար, եթէ որբանոցին
մէջ յեղափոխական դասեր տային : Ոչ այդ-
քան կարմիր, լայց ոչ ալ այդքան . . . սեւ :
Քիչ մը ազգային զգացում եւ արժանապատու-
թիւն ունենանք :

ՅԻՇԱՏԱԿԵԼԻ ԿԵԱՆՔ ՄԸ

Անցեալ կիրակի, Հրեշտակաբեկ տօնի յաջորդ
օրն, Հոգեհոգութեան պաշտօն կը կատարուէր քա-
ղաքիս Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Եզրագոսի
նախկին առաջնորդ Գարրիէլ Եպիսկոպոսի համար
Այս պաշտօնն, որ Սրբազանին մահէն 30 տարինե-
րէ ի վեր անընդհատ կը շարունակուի, սովոր կընծա-
յի մեզ վրո՞՞ծ մ'ընել գէթ համառօտակի ծանօթացնե-
լու համար փառսի ազնիւ ընթերցողներն լրագե-
րախոս եկեղեցականին կենսագրութեան մէկ քանի
գլխաւոր գիծերուն հետ, փափագելով որ կարողք
փութիկ հատարի մը նիւթ ընեն անոր գործոց բովան-
դակ պատմութիւնը, որ ինչ ինչ տեսակներով կը
խոստանայ յոյժ շահեկան ըլլալ :

1832ին Կիրակոս Սրբազան կը հրաժարի Եզրա-
գոսի առաջնորդութենէն. Երուսաղէմի Ս. Պատրիար-
քըն, որու իրաւասութեան ներքեւ էր այն ատեն
այս գիւղի, հայն պաշտօնին կը կոչէ, անուշտ կան-
խառու հաւանութեամբ իր ինքնակալութեան վարդա-
պետ Եպիսկոպոսին՝ այն ատեն զեռ վարդապետ, որ
եօթը տարիներէ ի վեր արդէն Աղբարանդիւր կը գտը-
նուէր եւ բոլոր միաբանից մէջ այս պաշտօնին ամենէն
արժանաւորը նկատուած էր իր կենցաղաւորութեամբ :

Այդ թուականին հայերն Եզրագոսի մէջ շատ
սուղաւթիւ էին — առ առաւել քանի մը հարիւր հօ-
գի, — Գահիրէի հայ ժողովուրդն իր անուամբ անշարժ
կողմած չունէր գրեթէ, ու հանրային հաստատու-
թեանց՝ առաջնորդարանի, վերնադարի մը մէկ սեն-
եակն հաստատուաւ Ս. Սարգիս մատրան, «Կարա-
տան», ծախքերն ու աղբատայ նախատեսին մեծաւ
մասամբ կը հոգայտէին Երուսաղէմի Ս. Յակոբեանց
վանքին անուամբ եղած կալուածոց(1) արդիւններէն .
աւելորդ է ըսել թէ այս չորս ճիւղերու համար ծախ-
սուած դրամն հեռի էր արդի համեմատութիւնը ունե-
նալէ . աղքատաց ու դարտան բոլորներն մահաւանդ
չատ նիւթար էին եւ երկուքին համապատասխան տարին 2—
3000 Փրանքէն անգլին չէր անցնէր : Գարրիէլ վար-
դապետ գիտցու թիչ ատենի մէջ սիրելի ընծայել
իր անձն եւ յորդեղի իր պաշտօնին հայ ժողովրդեան՝
որոյ ոյժ կուտար իր բարեկապատակ խորհրդոց ու գոր-
ծոց, օտարապէսայ՝ որ իր ազգեցութեան կը գի-
մէին շատ կարեւոր պարագաներու մէջ եւ երկրին
խնայանց՝ որք սիրով կընդունէին իր խնդիրներն ու
կը կատարէին :

Սրբազանին ջանից անգրանիկ սրտաւ իր եղած է
Ս. Աստուածածին եկեղեցին, որու յատկացեալ տեղ-
ւոյն վրայ բարձրացանք քանի մը տուներու եւ մէկ սի-
նակիլի գնման ու տաճարին շինութեան համար ծախք
եղած է 120,000 Փրանքէն աւելի գումար մը : 1838ի
վերջերն աւարտած էր եկեղեցւոյ շինքն, եւ ամեն
կողմէ միտքերը պատրաստուած էին փայլուն եղա-
նակաւ վարձատրել Գարրիէլ վարդապետի եօթնամ-
եայ անխնջ ջանքերն . հետեւաբար կը գրուի Երու-
սաղէմի Պողոս Պատրիարքին եւ կը խնդրուի Գարրիէլ
վարդապետի Եպիսկոպոսացումը : Պողոս Պատրիարք

(1) Այս կալուածոց խնդիրն ետեւեւ յուզուած է
Երուսաղէմի Պատրիարքութեան եւ Եզրագոսի առաջ-
նորդութեան միջեւ եւ 1869ին անոնց մեծ մասն Երու-
սաղէմի սեպհականութիւնն անցնելու եւ վերջնապէս
ու մասնակաւարտութիւնն վստօնի յանձնուած :

կուտայ իր հաւանութիւնը և նոյն տարւոյ յունիս 15/27ին՝ Գարրիէլ վարդապետ Կիլիկոյ Միքայէլ Կաթողիկոսէն Եպիսկոպոս կը ձեռնադրուի Եզրպոտոսի վիճակին վրայ: Տարւոյն վերջերն կ'օծուի Եկեղեցին և յետ այնու հոն մեայն կը կատարուին հաւատադրեայ հոգեւոր պաշտամունքը:

1843ին կը վախճանի Զմիւռնիացի Պօղոս պէյ Եւսուֆ, 19րդ դարու հայութեան հոյակապ փառքերէն մին, որ ամենափայլուն էջեր գրաւած է Եզրպոտոսի պատմութեան մէջ: Պօղոս պէյի կենդանութեան ատեն ազգին նուիրած կարեւոր կալուածք՝ մահէն յետոյ պահ մը կորսուելու վտանգին կը մատնուին: Գարրիէլ Սրբազան կը ջանայ ու կը յաջողի փրկանքն անհետացնել որով ազգը կը շարունակէ վայելել և կը վայելէ ցարդ նոյն կալուածոց արդիւնքներն, որոք Աղէքսանդրիոյ ազգային բարենպաստակ հաստատութեանց յատկացեալ են:

Պօղոս պէյի մահէն զրեթէ ամիսներէս յետոյ՝ վարչական տեսակետով ծանր խնդիր մ'ալ տեղի կուենայ. հովիւ և ժողովուրդ 12 տարիներէ ի վեր իրարու հետ ապրած, փոխադարձաբար գոհ էին իրարմէ և համբարշտաբար կաշխատակցէին յոգուտ հասարակաց: Ճիշդ այս միջոցին, բարի առաւօտ մը, Աղէքսանդրիոյ կը հասնի Երուսաղէմի միաբաններէն Դաւիթ վարդապետ ի ձեռին ունենալով Զաքարիա Պատրիարքի կոնքակն, որով նշանակուած էր առաջնորդ Հայոց Եզրպոտոսի: Պատրիարքական այս տեսարկնութիւն բնականաբար շատ ցուրտ սպաւորութիւն կընէ թէ՛ Եզրպոտոսի ժողովուրդեան վրայ, որ յանկարծակիի կը բերուէր և թէ Գարրիէլ Սրբազանի վրայ, որու արժանապատուութիւնն այնքան խորատկաւ կը հարուածուէր. հետեւաբար բուն ընդդիմութեան կը բաղլիս այդ անհեռատես տնօրինութիւն և Դաւիթ վարդապետ կատարուի ձեռնադրուի ետդառնալ և այն օրէն Եզրպոտոսի առաջնորդութիւնը կը դադարի Երուսաղէմի իրաւասութեան ենթակարգելէ և կը դառնայ վիճակ Կ. Պօղոս Պատրիարքութեան:

Գարրիէլ Սրբազան և արտով ու բնակով հարուստ Կարապետ ազա Գալուստեան, ջերմ քարեկամներ էին և իրարու հետ յաճախ տեսակցելու տօրիներ ունէին. շատ հաւանական է որ այս տեսակցութեանց ամթիւն Աստուծոյական աշխարհի այդ մեծանուն գտակն իր կարգ մը բարեգործութենէ յետոյ՝ ներշնչուած է այն գեղեցիկ խորհուրդով, որու գործադրութեամբ Խորհրդեան (այժմ՝ Գալուստեան) վարժարանն հիմնած ու ազգին նուիրած է 1854ին, անոր մատակարարութեան համար նուիրելով կարեւոր գետին մը իր կենդանութեան և կտակաւ մը ուրիշ կարեւորներ յետ մահու, որ պատահած է կտակին թուականէն քանի մը տարի յետոյ:

1858ին Սրբազանն, պատճառաւ իր հիւանդութեան, որ երկար տարիներէ ի վեր գինը կը նեղէր, բժշկաց խորհրդով կը մեկնի յ'Իստաթիւս և ժամանակ մը Նարուի, Ֆիորենցիո և այլուր դարմանուելէ յետոյ, կը վերադառնայ յ'Եզրպոտոս, որու վեհանքն իշխանը Բարձր Սայիտ փաշա 500 ոսկի նուէր մ'ըրած էր այս ուղեւորութեան ծախսաց համար:

Գարրիէլ Սրբազան, իր ժողովուրդեան հոնրային պէտքերուն հետգհետէ ասիլը տեսնելով, 1860ին տեսակցութեան մ'առնիլ, կընէ Սայիտ փաշային—«Սղիքսաները դիւերն երազս կուգան և կը մեղադրեն զիս թէ իրենց համար ինչո՞ւ չեմ հայցեր Ձեր Բարձրութեան հանրածաւալ գթութիւնը,— իշխանը կը ժպտի և Սրբազանը կը խնդրէ ու կ'ստանայ յ'անուն աղքատաց 600 Փէտտան (Փէտտանը 4200 քառակուսի մէթր է գրեթէ) տարածութեամբ ազարակ մը վերին Եզրպոտոսի մէջ:

Հապիւ երեք տարի կը բոլորի այս նուիրատուութեան վրայ, փաշան կը հաճի հարցունել Սրբազանին թէ ինչպէս է առաջնորդարանի երկտական վիճակը, «Ձեր նուէրին տարեկան արդիւնքն բաժնեցի և բաժնոցին բաժին չի մնաց, կը պատասխանէ Սրբազանը,— ուրեմն բաժնոցին պէտքերուն համար կը նուիրեմ ուրիշ ազարակ մը, կը յայտարարէ վեհանքն փաշան և կը շնորհէ 400 Փէտտան գետին մը՝ որ կը գտնուի Ստորին Եզրպոտոսի մէջ և որու կալուածագիրն ալ աղքատաց անունով հանել կուտայ Սրբազանն: Իշխանական շնորհ սոյն երկու կալուածոց տարեկան ցուտ արդիւնքն 16,000 Փրանքէն աւելի է այսօր:

Գարրիէլ Սրբազանի օրով ազգն կը տիրանայ նաեւ ուրիշ կալուածներու, որ ստիպոյն յիշուածներուն չափ կարեւորութիւն չունին. նոյն ժամանակ առաջնորդարանն ունէր այնպիսի առանձնաշնորհութեւն

ներ որ չունի այսօր, հետեւանօք երկրին դատական և վարչական կազմակերպութեանց յաջորդական փոփոխմանց:

Գարրիէլ Եզրպոտոս ծերանալ սկսած և հիւանդութիւնն հետգհետէ ծանրացած էր, երբ Եթէ չենք սխալիր, 1863ի վերջերն Եզրպոտոս կուգայ Մեսրոպ վարդապետ՝ Սահանաղարութիւնը գործադրելու պաշտօնով: Ժողովուրդեան քուէարկութեամբ կընտրուի «Թաղական խորհուրդ», մը. ժողովներ կազմակերպելու խորհուրդն ծրագրային վիճակի մէջ կը մնայ և Թաղական առաջնորդարանի հետ կառնանէ ազգաւ ինչ ամեն կարգի գործոց կառավարութեան գէկն:

Մեսրոպ վարդապետի մէկնումէն յետոյ՝ տեղւոյս Թաղական խորհուրդն Պօղոս ազգ. Պատրիարքարանէ կը խնդրէ որ արժանաւոր եկեղեցական մը զրկէ յ'Եզրպոտոս, իրեւ փոխանորդ Գարրիէլ Սրբազանի: Պատրիարքարանը կը զրկէ Միքայէլ Եպիսկոպոս (յետոյ Կաթողիկոս Կիլիկոս) որ 2—3 տարի պաշտօնավարելէ յետոյ, կատարուի թաղով իր պաշտօնն ու պաշտօնատեղին: Անոր յաջորդ կը նշանակուի Տ. Կարապետ հայրն, որ Գարրիէլ Սրբազանէ ձեռնադրելով միակ քահանայն է և որ դեռ կապի:

Գարրիէլ Սրբազանի հիւանդութիւնն օրէ օր կը ծանրանայ և այս պատճառաւ կառնանանայ Մարմինայի գերեզմանատան գէմ գտնուած ազգային տունն և հոն կը վախճանի 1867 տարի 21ին (Հ. Տ.) իր 65 տարեկան: Ազգն ի նշան երախտագիտութեան մեծահանգստ յուզարկաւորութեամբ կ'ափսոսէ հոն գուցեղոյ մարմինն Ս. Եկեղեցւոյ գաւթին մէջ և մարմարեայ փայտէջ շէրմ մը կը կանգնէ անոր վրայ՝ համառօտ ալ պերճախօս յիշատակարանու մը:

Գահիւն, 14/26 նոյեմ. 1897

Ն. Մ. ԱՂԱԶԱՐՄ

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Օրուան ամենէն հրատապ ինդիքը Ալպանիացիներուն ապստամբութիւնն է: Ռիւթէրի գործակալութիւնը հետեւեալ հեռագիրը ստացած է Կ. Պոլսէն երէկի թուակաւնով.

«Հինգ հազար Ալպանիացիներ ապստամբած են թրքական իշխանութեան դէմ: Ալպստամբներուն և թուրք զինուորներուն միջեւ կատաղի ճակատամարտ մը տեղի ունեցաւ ի Տիպուլա: Երկու կողմն ալ մեծ կուրստներ ունեցան: Ամբողջ այդ բնագաւառին մէջ մեծ յորդում կը տիրէ:»

Այս եղելութեան վրայ աւելի մանրամասնութիւն չունինք առ այժմ: Թղթաբերին սպասելու ենք այս յանկարծական ապստամբութեան վրայ աւելի որոշ գաղափար մը ու նենալու համար: Միայն հիմակուց սա կըրնանք ըսել թէ ալպանիական այս շարժումը գիւնադիրութեան սեղանին վրայ ինդիք մը եւս կը դնէ, իրեւ թէ բաւական չըլլային հայկական ինդիքը, յունականը, կրէտականը և պուլկարականը:

—Վերջին աւստրո-թրքական ծանօթ միջադէպին առթիւ Թաւ իր գոյնը կը փոխէ և հակաթրքական լեզու մը գործածել կսկսի ու կը շնորհաւորէ Պաւոն Քալիչէն՝ իրեն տրուած գոհացումին համար:

Պ. Հանօթիքի բերան եղող այդ թերթը հետեւեալ խորհրդածութիւնները կընէ այս առթիւ:

«Էտէմ բաշայի և իր բանակին տարած վերջին յաղթութիւնը Սուլթանին ազգեցու թիւնը կը կրկնապատկեն իր հպատակ իսլամներուն քով: Սուլթան Համիտ իր ուժին վրայ գիտակցութիւն և հպարտութիւն ունենալ կսկսի և իրաւունք կ'ունենայ ահագին վստահութիւն ունենալու իր պետութեան ան-

խախտութեան վրայ և հետեւաբար միտքը դրած է կարեւորութիւն չի տալ այն ամեն պատգամներուն որ Մեծ Տէրութեանց կողմէ կրնան իրեն դալ:

«Ժամանակ մը կը կարծուէր թէ Թուրքիոյ անկախութիւնը և ամբողջ պահպանութիւնը sine qua non պայման մին է միջազգային խաղաղութեան և այս սկզբունքը պաշտպանելու համար մընաւ և Անգլիա հարկւրներով միլիոններ զոհած և հեղեղի պէս արին թափած են: Բայց հիմա գործերը տարբեր կերպարանք մը առած հն և հասկցուած է որ ատենը եկած է այս ամենը փոխելու:»

Երբեմնի թրքաւէր թերթը սապէս կը վերջացնէ այդ յօդուածը.

«Հակառակ Թուրքիոյ անտեսական անձուկ վիճակին և միջազգային արդի կացութեան պահանջած խոհմութեան, Պոլսոյ մէջ պաշտօնական իրարանցում մը կը տեսնուի զինուորական զորութիւնը աւելցնելու և ծովային ոյժը բազմապատկելու: Թուրքերուն այս եռանդը պարտականութիւն կը դնէ Եւրոպիոյ վրայ Սուլթանին աչքին առջեւ պարզել արդի կացութեան ճշմարիտ վիճակը:»

—Եւրոպացի ճամբորդները—կըսէ Ռիւթէր—գանգատ կը յայտնեն թրքական իշխանութեանց դէմ որ ահագին դժուարութիւններ կը յարուցանեն երբ օտար հպատակ մը կուզէ ճամբորդել: Պոլսոյ նաւահանգստին մէջ բոլորովին արգիլուած է շոգենաւի մը վրայ երթալ առանց մասնաւոր արտօնութեան: Նոյն իսկ գաւառներուն մէջ ճամբորդութիւն մը կատարելու համար ուղղակի Եւրոպայէն քեզիքէն մը խնդրելու է: Դեսպաններուն ուղադրութիւնը հրաւիրուած ըլլալով իրաց այս վիճակին վրայ, ասոնք հաւաւաբար դիմում մըրած են Բ. Դրան՝ նըւաղ նեղացուցիչ միջոցներ ձեռք առնել տալու համար:

—Կազէթ Տը Ֆրանսիժօնի մէջ կը կարդանք—

«Ռուսիոյ կողմէ եղած առարկութիւններուն հետեւանօք Շէֆֆէր պէյի ընտրելութիւնը իբրեւ Կրէտէի կառավարիչ, վերջնականապէս մէկ կողմ դրուած է: Չարին կառավարութիւնը միւս տէրութիւններու հետ տեսութիւններ փոխանակելու վրայ է այն սկզբունքին վրայ, որով Կրէտէի կառավարիչը պէտք է ըլլայ այն կրօնքէն որուն կը պատկանի կողմին բնակիչներուն մեծամասնութիւնը:

«Մուրավիէֆ կոմսը կը պնդէ թէ Կրէտէի կառավարիչը յունադաւան մը միայն կրնայ ըլլալ և կը խոստանայ ընդունելի անձնաւորութիւն մը ներկայացնել եթէ Ռուսիոյ այս առաջարկը ընդունուի:»

—Մէրսինի միջադէպը հաղիւ կարգադրուած ահա՝ գրեթէ նոյն օրինակ դէպք մըն ալ կը պատահի այս անգամ անգլիական հրապարակի մը նկատմամբ:

Պ. Միլլըրտ, որ պաշտօն ունէր Լոնտոնի նախատամատոց յանձնաժողովին կողմէ դրամ և հազուատ բաժնել Փոքր Ասիոյ մէջ տառապող հայերուն, արգիլուել է՝ Պոլսէն զրկուած հրամաններուն վրայ իր ճամբորդութիւնը կատարել և շարունակել իր մարդասիրական պաշտօնը: Սըր Ֆիլիք Քըրքի կողմէ Բ. Դրան

ուղղութեամբ երեք ազգայնագրերու շնորհիւ այդ արգելքը վերացուած է և միևնոյն տունն արտօնուած է Պ. Միշլերտի Խարքերդի մէջ որբանոց մը հաստատուել ուր պիտի ընդունուին այն որբերը որոնց ծնողքները չարգուեցան վերջին դէպքերուն մէջ :

—Թայլըի Վիէնայի թղթակիցը, որ ընդհանրապէս մօտէն ծանօթութիւն ունի Աւստրիական խնդրոյն վերաբերող գործերուն վերայ, գիտել կուտայ թէ Տաճկաստան երբէք այսքան դրամական անձկութեան մէջ չէ գտնուած որքան հիմայ՝ պարագայ մը որ շատ կղբաղեցնէ եւրոպական զահիճները :

Յունական պատերազմի տուգանքը — Եթէ երբէք վճարուի, — մեծ բանի չի պիտի կրնայ ծառայել որովհետեւ այդ ստակով Տիվանը հազար ու մէկ ծակ ունի գոցելիք։ Այդ դրամը ծախսուելէն վերջը Թուրքիոյ ելեւմտական նախարարութիւնը բոլորովին պիտի չուարի։

Պետութեան զինուորական և քաղաքացիական պաշտօնեաները կրնան նորէն իրենց գործը շարունակել որովհետեւ այդ խնդրերը ընդհանրապէս ամսականի երես տեւեւելու սովորած չեն, բայց պէտք է ի նկատի առնել թէ օտար Տէրութիւններու քով գտնուող դեսպանները առանց ստակի չեն կրնար ըլլալ։ Ասոնց քանի մը հատին առանց հրամանի առնել քաղքը ապացոյց մըն է որ Թուրքիոյ դեսպանական մարմինը երբէք այսքան երկար ժամանակ առանց ամսականի չէ մնացած։

Իրաւ է որ Էտհէմ փաշայի յաջորդութիւններէն ի վեր Մալիէին գործը աւելի զրգուարացած է, որքան որ վերջի պատերազմի ելքը ենթադրել կուտար թէ Թուրքիոյ վիճակը բարւոյթած, ազգեցութիւնը աւելցած և վարկը բարձրացած է, սակայն իրողութիւնը ցոյց առաւ թէ Թուրքիոյ յաղթութիւնը տարբեր արդիւնք մը առաջ բերաւ։

Ընդհանուրին կարծիքը այն թէ յառաջիկայ գարնան անպատճառ չփոթութիւն մը պիտի ծագի Պալքաններուն կողմը և ատոր համար Սուլթանին կառավարութիւնը ստիպուած է ծախսերը աւելցնել և ռազմագիտական պատրաստութիւններ տեսնել հիմակուց այդ անխուսափելի վտանգին դէմ դնելու համար։

Բայց առ այժմ՝ իր գերմանական մատակարարներուն վստահութիւն ներշնչելու համար Սուլթանը Պէրլինէ բերել տուած է խորհրդական մը որուն ձեռքով անտեսական բարենորոգումներ ընել պիտի տայ իր կայսրութեան մէջ։

Սակայն Վիլհէլմ կայսեր զրկած խորհրդականը որքան որ մասնագէտ մը ըլլայ չի պիտի կրնայ բան մը ընել և կամ աւելի ճիշդը ըսելու համար, իրեն կարելի չի պիտի ըլլայ օգտակար գործ մը կատարել։

Միւս կողմէ, գերման տունները — Բրիւրի գործարանը օրինակի համար — այնքան քիչ հաւատք ունին օսմանեան վարկին վրայ որ երբէք իրենց ապրանքը չեն զրկել մինչեւ որ փոխարժէքը չստանան։ Ասոր համար է որ Բ. Դրան կողմէ եկած յանձնարարութիւններուն մեծագոյն մասը չէ գործադրուած։

ԱՅԺՄԷՈՒԹԻՒՆ

Խտիվական Օրերայի մէջ իսպանական խումբին յաջողութիւնները, Աղեխանդիոյ մէջ հաստատուած «Թասրոնի պաշտպան» ընկերութեան վստահացումը եւ Օր. Ե. Գարազաի հեռագրով Պաֆոնէ ուղարկուած մասնաւոր այժմէութիւն մը կուտան այս պահուսնական գործունէութեան։

Ուրեմն անպատեհ չէ որ մենք ալ մեր աշտարակի Այժմէութիւնը նուիրենք քաշական որ եւ է խնդրոյ մը, զգացնել տալով կանխաւ քէ այդ վերի յորերուն պէս վարդազոյն սպառնորթիւն ընելու հանգամանքը յունի մեր ընտրած նիւրը։

Սկսինք ուրեմն։ Ածականը կը համաձայնի գոյականին հետ, հարաբերութեամբ, համարապետքի մը՝ կայսրութեան մը, պատրաստէր պահանջատէրին հետ, քեւորք՝ պարիքունին, միևնաջ մեր դերասաններն են որ համաձայնութեան հետ գործ յունին։

Եւ ասոր աւելնելն ինչոր օրինակը մեզ կուտայ Այս-է-Ազիզ քասրոնին քաշառիկ խումբը որ վեց կամ եօթը հոգի է կը քաշականայ ու եւրոպական տեսութիւններուն պէս, որոնք որքան համաձայնի կողմէն այնքան իրարմէ կը հեռանան։

Աղեխանէան խումբ մը կը կազմէ, Պէնչեան քեր ուրիշ մը եւ Պենչեան փիլ եւրոպ մը։

Ամենքն ալ իրարու քարեկամ են, ամենքն ալ արհեստակից, միեւնոյն հասարակութեան առջեւ կը խաղան, միեւնոյն խաղերը, միեւնոյն հագուստները ունին գրեթէ միեւնոյն շահերը. միեւնոյն քասրոնը, մեկուն դրամական վիճակը միւսին աւելի քարձր չէ, եւ ոչ մէկին կազմած խումբը միւսին աւելի յաւ, ասկայն ամենքն ալ գաւ իրենց փնձանոյնները ունին, իրենց հաշիւները, իրենց պահանջները։

Փոխադարձ աջակցութեան եւ փոխադարձ վստահութեան սկզբունքն է որ կը պակսի իրենց. հետեւաբար ոչինչ կարելի է ընել առանց անոր։

Անցեալ տարի գեշ աղէկ սէզոն մը ունեցանք, ինչո՞ւ չի շարունակեմք նաեւ այս տարի։

Մեր փափակն է այդ խումբը վերականգնուած տեսնել եւ կը յանձնարարեմք Տեսարժանիքներն եւ Աղեխանէանի ձեռք ձեռքի տալ եւ աշխատիլ։

Ուրախ պիտի ըլլայինք եթէ մեր այս առաջարկութիւնը արդիւնք մը ունենար, ասկայն կը տարակուսեմք։ Վեց Տեսութիւնները համաձայնելու համար Տարտանելի նեղուց մը ըլլալու չէր, հայ դերասաններն ալ համաձայնելու համար պէտք էր որ կիշէն գոյութիւն չունենար։

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Բոսկրէի մէջ կը կարգանք թէ նուպար փաշա Գահրէ պիտի գայ յառաջիկայ Յուն վարին։

Ն. Վանսութիւն այժմ Բարիզ կը գլուխուի։

Կ. Պոլսէ առնուած հեռագիր մը կը գլուխէ Եգիպտոսի արտաքին գործոց նախարարութեան պաշտօնեայնէն և Գահրէի հայոց

ընդհ. ժողովոյ դերատեսնապետ Միհրան էֆէնտի Մէլիքեանի մահը։

Հանգուցեալը իր ծննդավայրը Պոլիս գացած էր ասկէ երեք ամիս առաջ իր հիւանդութեան դարման յի վնասուելու համար։

Միհրան էֆ. Մէլիքեան կը թողու այրի մը և երեք զաւակներ որոնց կը յայտնենք մեր ցաւակցութիւնները։

Թերթը մամուլին տակ գրուած պահանջն ցաւալի լուր մը կը հասնի մեզ Կ. Պոլսէն։

Փոթթուքալ Միքայէլ Բաշան յետ տաժանելի հիւանդութեան վախճանէր է ամիսոյ 19ին։

Մանրամասնութիւնը յաջորդ. թուով։

ՏԵՂԱԿԱՆ

Նախարարաց խորհուրդը ոչ հինգշաբթի օր նիստ ըրաւ, Ապրիլի պալատին մէջ, Բարձր. Խորհրդին նախագահութեամբ, վաւերացուց 1898ի կառավարական ընդհանուր պիւտճէն և հետեւեալ որոշումները ըրաւ։

Պ. Տիրպէր-օղլու՝ տեղական վճարելի աւտերի խորհրդական կարգուեցաւ փոխանակ Դօրպէթ պէյի։

Արտօնուեցաւ յանձնաժողով մը կազմել որուն պաշտօնը պիտի ըլլայ կառավարական վարչութիւններու և պաշտօնատանց ծախքերը սահմանել։

Որոշեց հեռագրական գիծ մը հաստատել Աքրիի, Ապուրիի և Տէֆլուի միջև։

Վաւերացուց նաեւ Աղեքսանդրիոյ մէջ հաստատուած «Գեղարուեստի պաշտպան ընկերութեան» կանոնագիրը, որուն նպատակն է քաղաքներէ թատերական ձեռնարկութիւններ։

—Թղթատարական վարչութիւնը որոշած է յառաջիկայ յունվարէն սկսեալ արտասահմանի համար գործածուած ֆարք-քօսթայնէրու գինը 4 միլիէմի իջեցնել փոխանակ 5ի, ինչպէս նաեւ Եգիպտոսի մէջ կէտէն միւսը զրկուած պարզ նամակներուն որոշուած ծանրութիւնը փոխանակ 15ի 30 կուտի բարձրացնել։

Որոշած է նաեւ Գահրէի և Աղեքսանսանդրիոյ մէջ յորիչներու ձեռքով մինչեւ տունը յանձնել ամեն մէկուն հասցէին եկած թղթատարական-ծրարները։

Միեւնոյն վարչութեան որոշմամբ քան նոր թղթատարական որոշումներուն պիտի հաստատուին Եգիպտոսի զանազան գաւառներուն մէջ։

—Այսօր Աղեքսանդրիոյ խառն դատարաններու առջեւ կը տեսնուի այն դատը զոր անգլիացի զինուորի մը կողմէ Բաս-էլ-Թինի զօրանոցէն արձակուած հրացանի հարուածով մը սպաննուած տղուն ծնողքը բայցած են այդ զինուորին դէմ։

—Անցեալ երկուշաբթի վերջացող շաբթուան մէջ ժանտախտի 110 դէպքեր պահած են ի Պոմպէյ, որոնցմէ 71ը մահացու։

ՀՈՍԿԷ ՀՈՆԿԷ

ԱՍՏՂԵՐԸ

Ինչպէս արդէն գիտական հանդէսները ծանուցին, անցեալ հինգշաբթի օր մեր երկրագունդը իր շրջանին մէջ գիսաւոր աստղերու անձրեւի մը հանդիպեցաւ։ Այս երեւոյթը նորութիւն մը ըլլալէ դադարած է երկար ժամանակէ ի վեր։ Այն ատեններու մէջ չենք ապրիր ուր բնութեան ամեն մէկ արկածին մէջ աստուածային կամքի մը կամ քմահաճոյքի մը արտայայտումը կը փնտռէին, սակայն նորէն մարդս որքան սկզպտիկ դարձած ըլլաւ

ծուքիւն—Արագ
դէմներու եւ այլ

Քահիրե. ՊԱԶԱՐ ՄՈՒՐՈՒՐ 14-24

A black and white woodcut-style illustration of a woman's head and shoulders. She has voluminous, curly hair. Her face is replaced by a round clock face with a single hand pointing to the 12 o'clock position. She is wearing a high-collared dress with a jagged, ruffled neckline. Her hands are raised to her cheeks, with her fingers spread.

տալիանաց ընտրութեամբը ու գնաց անկրկնելի աժա.
նութեամբը, վերջերս բոլորովին հոս փոխադրուած

Թիւնք փութով կը կատարուին : 10—12

ԿԱՅՄԱՐԱՆՔ		ԱՌԱՌՑ	ԵՐԵԿՈՑ	ԿԱՅՄԱՐԱՆՔ		ԱՌԱՌՑ	ԵՐԵԿՈՑ
Գաճիկ	մեկ.	11 40	7 —	Սիւնդ (բարափ)	մեկ.	9 50	—
Պէնհա)	ժամ.	12 28	7 48	» կայարան	»	—	3 30
	մեկ.	12 33	7 53		»	երեկոյ	1 20
Զակաղիկ)	ժամ.	1 34	8 54	Իսմաիլիս	»	—	—
	մեկ.	1 44	9 4		»	—	—
Իսմաիլիս	մեկ.	3 40	1 —	Զակաղիկ)	ժամ.	3 7	8 53
	—	—	—		»	մեկ.	3 17
Սիւնդ կայարան	ժամ.	—	5 —	Պէնհա)	ժամ.	4 13	9 47
	—	—	—		»	մեկ.	4 17
Տօք (բարափ)	ժամ.	6 55	—	Գաճիկ	ժամ.	5 5	10 35